ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ
ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ

«16» օգոստոսի 2024թ. No 6/1-Գ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«Սեմ 2017» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու վերաբերյալ

Գնման ընթացակարգի ծածկագիր՝ ՀՀՊԵԿ-ԷԱՃ-ԱՊՁԲ-23/15-1

Մասնակից՝ «Սեմ 2017» ՍՊԸ
ՀՎՀՀ 02898105, գործունեության հասցե՝ ք. Երևան, Արգիշտի 7/13 բն.33

Համաձայն Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի (այսուհետ՝ Գնորդ) և «Սեմ 2017» ՍՊԸ-ի (այսուհետ՝ Վաճառող) միջև Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի կարիքների համար օդորակիչների ձեռքբերման համար 2023 թվականի դեկտեմբերի 27-ին կնքված թիվ ՀՀՊԵԿ-ԷԱՃ-ԱՊՁԲ-23/15-1 ծածկագրով «Պետության կարիքների համար ապրանքի մատակարարման» պետական գնման պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) «Սեմ 2017» ՍՊԸ-ն Պայմանագրի 1.1 կետով սահմանված կարգով պարտավորվել էր մինչև 2024 թվականի ապրիլի 20-ը մատակարարել 40 հատ 9000 BTU և 10 հատ 30000 BTU հզորության օդորակիչներ, սակայն Ընկերությունը 2024 թվականի ապրիլի 11-ին մատակարարել է պայմանագրով նախատեսված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանքատեսակներ, որոնք պատասխանատու ստորաբաժանման կողմից չեն ընդունվել և տրվել է բացասական եզրակացություն: Ընկերությունը 2024 թվականի ապրիլի 30-ին մատակարարել է Պայմանագրի 1-ին չափաբաժնի 40 հատ 9000 BTU օդորակիչներից 15 հատը և 2-րդ

չափաբաժնի 10 հատ 30000 BTU օդորակիչներն ամբողջությամբ: Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեն 2024 թվականի հուլիսի 25-ի թիվ 1/18-1/46552-2024 գրությամբ Ընկերությանը տվել է ողջամիտ ժամկետ՝ 5 աշխատանքային օր Պայմանագրով նախատեսված տեխնիկական բնութագրին համապատասխան Պայմանագրի 1-ին չափաբաժնով չմատակարարված 25 հատ 9000 BTU օդորակիչները մատակարարելու համար, սակայն վերջինս նշված ժամկետում ապրանքը չի մատակարարել:

Վաճառողի կողմից խախտվել են Պայմանագրի էական պայմանները: Հետևաբար, Պայմանգրի 2.1.1 և 2.1.7 ենթակետերի համաձայն՝ Պատվիրատուն ստիպված է եղել միակողմանի մասնակի լուծել Պայմանագիրը՝ 1-րդ չափաբաժնի մասով:

Եզրահանգում

Վերոնշյալ կարգավորումների համատեքստում անդրադառնալով առկա փաստական հանգամանքներին՝ պետք է արձանագրել, որ ի հակադրություն Պայմանագրի պահանջներին՝ Վաճառողը խախտել է Պայմանագրով ստանձնած պարտավորությունները, որը հանգեցրել է Պատվիրատուի կողմից գնման գործընթացին «Սեմ 2017» ՍՊԸ-ի հետագա մասնակցության դադարեցմանը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենք»-ի 6-րդ հոդվածի 2-րդ մասով, այն է՝ լիազորված մարմինը մասնակցին ներառում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում պատվիրատուի ղեկավարի պատճառաբանված որոշման հիման վրա, **որոշում եմ՝**

1. «Սեմ 2017» ՍՊԸ-ին ներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ

8/16/2024

X

ԱՐՏԱԿ ՄԱՆԳԱՍԱՐՅԱՆ

Signed by: MANGASARYAN ARTAK 2707770051

ԱՐՏԱԿ ՄԱՆԳԱՍԱՐՅԱՆ

ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ

0015, Երևան, Մ. Խորենացի 3,7 Հեռ. +374 60 84 46 57
Կայք՝ www.petekamutner.am էլ. փոստ՝ secretariat@petekamutner.am